

Կազմակերպությունները գործունեության ընթացքում ենթարկվում են ֆինանսական պարտավորությունների հետ կապված ռիսկերի, որոնց կառավարումը և վերահսկողությունը պետք է հիմնված լինեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների կանխատեսման ու գնահատման վրա:

Ներքին ռիսկերը կազմակերպության համար համընդհանուր բնույթի են և կախված են պարտավորությունների օպտիմալ պարտաճեղի, դրամական հոսքերի կառավարման և այլ խնդիրների հետ: Իսկ արտաքին գործոններն ընդհանուր առմամբ կախված են արտարժույթային ռիսկի հետ, քանի որ ներգրավված փոխառությունները արտահայտված են հիմնականում արտարժույթով, իսկ գործառնական գործունեությունից առաջացող հոսքերը դրամային են:

Չտեսաբար՝ կազմակերպությունը ներքին և արտաքին ռիսկերից առավելագույնս ապահովագրվելու համար պետք է ներդրի ֆինանսական պարտավորությունների ռիսկերի վերահսկման որոշակի համակարգ, որով կատարված վերլուծությունները են աշխատանքները թույլ կտան խուսափել վերոնշյալ խնդիրներից:

Ընդհանուր առմամբ՝ այդ համակարգը պետք է ներառի հետևյալ գործառնականությունները.

- Ռիսկերի նվազեցում՝ փոխառու միջոցների լիմիտավորման (լիմիտների) միջոցով, ինչը ենթադրում է պարտավորությունների սահմանափակում՝ ելնելով ֆինանսական անկախության ցուցանիշներից: Ուստի՝ օպերատիվ վերլուծության համար անհրաժեշտ են համապատասխան կառավարչական հաշվառման հաշվետվություններ, որոնք ամփոփ թվերով ցույց կտան պարտավորությունների փոփոխման հետեւանքով կազմակերպության ֆինանսական կայունության վիճակը:

- Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում, որը պահանջում է որակական փոփոխություններ ներգրավված փոխառու միջոցների կառուցվածքում, այլ կերպ ասած՝ ֆինանսավորման նպատակից և շուկայական իրավիճակից կախված համապատասխան միջոցների ներգրավման ընտրություն:

- Անբարենպաստ իրավիճակների ռիսկերից խուսափելու նպատակով ակնկալվող կորուստների դուրսգրման պահուստի ստեղծում:

- Ածանցյալ գործիքների կիրառում, որն անհրաժեշտ է դարձնում, շուկայական իրավիճակից ելնելով, ֆինանսական պարտավորությունների այլ պայմանների կիրառումը՝ օգտագործելով ածանցյալ գործիքները (ֆորվարդներ, սվոպներ):

Անդրադառնալով գործառնականության յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Ռիսկերի սահմանափակում՝ վարկային լիմիտների միջոցով

Ֆինանսական կայունության տեսանկյունից խիստ կարևոր է կազմակերպության ֆինանսավորման միջոցների օպտիմալ տարբերակի, ֆինանսական պարտավորությունների կազմի ընտրությունը և որոշակի սահմանաչափերի սահմանում: Ուստի՝ փոխառու միջոցներ ներգրավելիս յուրաքանչյուր անգամ պետք է հաշվարկվի ցուցանիշների համակարգ, որը թույլ կտա ճիշտ որոշում կայացնել: Նշված խնդիրը կարող է լուծվել՝ օգտագործելով ներդրված ERP (Enterprise Resource Planning) համակարգի օպերատիվ հաշվետվությունների ճյուղը (OLAP), որը կարող է ներառել հետևյալ ցուցանիշները (տես՝ աղյուսակ 1):

(1) Ֆինանսական կախվածության գործակիցը դիտարկվում է

որպես փոխառու կապիտալի և ակտիվների հարաբերակցություն: Այն ցույց է տալիս, թե ակտիվների որ մասն է ձեռավորված պարտավորությունների հաշվին: Այս գործակցի արժեքի գերազանցումը նորմատիվներից վկայում է ֆինանսական կախվածություն:

(2) Ֆինանսական ռիսկի գործակիցը ցույց է տալիս, թե կազմակերպության ակտիվներում ներդրված սեփական միջոցների յուրաքանչյուր դրամին որքան փոխառու միջոցներ է ընկնում: Սա համարվում է ֆինանսական կայունության հիմնական ինդիկատորներից մեկը: Որքան բարձր է դրա արժեքը, այնքան մեծ է այդ կազմակերպությունում ներդրման ռիսկը: Դրա աճը վկայում է փոխառու կապիտալից կախվածության աճ և ֆինանսական կայունության նվազում:

Աղյուսակ 1-ից ելնելով՝ կարելի է սահմանափակումներ դնել նաև վարկային գծերի պայմանների վրա, թույլ չտալով գերազանցել որոշակի սահմանը:

Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում

Ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացումը ավելի հրատապ է մասնավորապես այն կազմակերպություններում, որտեղ ներգրավված ֆինանսական միջոցները ուղղվում են օգտագործվող տեխնոլոգիայի արդիականացմանը և նոր տեխնիկայի ձեռքբերմանը: Հաճախ տնտեսավարող սուբյեկտի մոտ առաջ է գալիս այն հարցը, թե որն է ավելի նպատակահարմար՝ հիմնական միջոց ձեռք բերել լիզինգի՝ միջոցով, թե բանկերից վերցրած վարկի հաշվին: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է իմանալ բանկային վարկերի համեմատ լիզինգի տարբերությունները՝ առավելությունները և թերությունները: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ միանշանակ հնարավոր չէ տալ վերը քննարկվող հարցի պատասխանը, քանի որ տարբեր են տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական հնարավորությունները և ֆինանսական կայունության ցուցանիշները:

Մենք առաջարկում ենք տվյալ հարցի մոտեցման հետևյալ համակարգը.

- ✓ յուրաքանչյուր փոխառու միջոցի ծախսերի որոշում,
- ✓ դրանցից յուրաքանչյուրի արդյունավետության գնահատում,
- ✓ ցուցանիշների համադրում:

Ածանցյալ գործիքների կիրառում

Կազմակերպությունների մեծ մասում ներգրավված միջոցները արտահայտված են արտարժույթով, ուստի՝ ֆինանսական պարտավորությունների ռիսկայնությունը ուղղակիորեն կախված է դոլար/դրամ, եվրո/դրամ փոխարժեքային տարբերություններից: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև պարտավորությունների կառուցվածքի փոփոխման դիմադրական՝ անհրաժեշտություն է դառնում արտարժույթային ռիսկերի կառավարման համակարգի ստեղծումը, որի նպատակն է այդ ռիսկը նվազագույնի հասցնել և կուրսային տատանումներից ծախսերի կրճատումը: Մեր կողմից առաջարկվող՝ արտարժույթային ռիսկի կառավարման համակարգը իրենից ներկայացնում է հետևյալ գործընթացները.

- արտարժույթային ռիսկի վրա ազդող գործոնների տարրորոշում (իդենտիֆիկացիա),
- արտարժույթային ռիսկի քանակական և որակական գնահատում (մոնիտորինգ),

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ատենախոսության թեմա՝
Ֆինանսական պարտավորությունների հաշվառման կատարելագործումը (ՀՀ էլեկտրաէներգիայի բաշխման համակարգի կազմակերպություններում)

Գիտական ղեկավար՝
Ադասի ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Վազգեն ԹԵՐԶԻԲՎՇՅԱՆ
ՀԳՏՀ
«Հաշվապահական հաշվառում և աուդիտ» ամբիոնի ասպիրանտ



Ֆինանսական կայունության ցուցանիշներ ¹		Աղյուսակ 1.
Ցուցանիշներ	Հաշվարկման բանաձև	Նորմատիվ
Ֆինանսական կախվածության գործակից (1)	$\frac{A}{B+C}$	≤ 0.5
Ֆինանսական ռիսկի գործակից (2)	$\frac{D}{E}$	≤ 1

I վարկերի եւ փոխառությունների վերլուծական ընթացակարգեր, վերահսկողական թեստավորում

Աղյուսակ 2.

- Հաշվապահությունից ստանալ վճարման ենթակա վարկերի ցանկը, ներառյալ՝ վարկատրոսի անվանագրքը, տարեկանի եւ տարեկանի մնացորդները, տոկ սարքույթը, վճարման ժամկետները, եւ համազվել, որ մայր գումարի մնացորդը համապատասխանում է շրջանառության տեղեկագրի գումարին:
- Վերահսկել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը վարկերի եւ փոխառությունների գծով:
- Պատրաստել բոլոր վարկերի եւ փոխառությունների տարեկանի եւ տարեկանի մնացորդների, ավելացումների եւ կվեցեցումների ցանկը: Այն պետք է պար ունակի տարեկանի մայր գումարի եւ տոկոսների գծով մնացորդները, տոկոսների հաշվարկում, վճարումները եւ տարեկանի մնացորդները յուրաքանչյուր վարկի մայր գումարի եւ վճարման ենթակա տոկոսների մասով:
- Համոզվել, որ վարկերի եւ փոխառությունների գործառնները (կայանագրեր) պատշաճ կերպով հաստատվում են:
- Համոզվել, որ վարկերի եւ փոխառությունների կայանագրերը ստորագրված են լիազորված անձանց կողմից:
- Վերահսկել վարկերի եւ փոխառությունների վերաբերող ներքին վերահսկողական ընթացակարգերը:
- Պարզել վարկերի եւ փոխառությունների գնահատման հիմքերը (ամբողջից ած պետք է):
- Ստուգել արդյունավետ տոկոսադրույի հաշվարկը:
- Համահամեմատել սկզբնական մնացորդը նախորդ տարվա հաշվեկշիռի վերջնական մնացորդի հետ:
- Ստուգել՝ արդյո՞ք վճարման ենթակա վարկերի մասով պատշաճ կերպով դասակարգված են ընթացիկ եւ ոչ ընթացիկ մնացորդները:
- Համահամեմատել ստուգման ենթակա ժամանակաշրջանի բոլոր նոր վարկերը եւ վճարումները դրանք հիմնավորում փաստաթղթերի հետ:
- Համահամեմատել ստուգման ենթակա ժամանակաշրջանում վճարված տոկոսները դրանք հիմնավորող փաստաթղթերի հետ:
- Ստուգել՝ արդյո՞ք անհատներին եւ ոչ ձեզ հղիներին վճարված տոկոսներից պատշաճ կերպով գանձվել եւ պետական բյուջե են վճարվել համապատասխան հարկերը:
- Վերահսկել վարկային պայմանագրերում ամրագրված պայմանները եւ պարտավորությունները, եւ համոզվել, որ դրանք պահպանվում են կազմակերպության կողմից:
- Ըշտել՝ արդյո՞ք արկային ռիսկերի, որը ղեկավարությունը վարկերի դրեւ եւ պայմանագրի պայմանները չի պահպանել, եւ եթե կան նման ռիսկեր, պարզել՝ արդյո՞ք կատարվել են համապատասխան ճշգրտումներ Ֆինանսական հաշվետվություններում:
- Հավաստիանալ, որ վերահսկողական գրասենյակում պահվող վերաբերյալ կատարվել են ստանդարտներով պահանջվող բացահայտումները: Գրասենյակում պահվող վերաբերյալ տեղեկությունները տրամադրել համապատասխան բաժինները ստուգող աուդիտորներին (հիմնական միջոցներ, շրջանառու միջոցներ եւ այլն):
- Վերահսկել դրամական հոսքերի մասին հաշվետվությունը եւ հաշվապահական գրանցումները՝ ստացված վարկերի եւ փոխառությունների ու դրանց մասով տոկոսների գծով:
- Պատրաստել վարկերի եւ փոխառությունների ծանոթագրություն աուդիտորական հաշվետվության համար: Եւ դրանց կապիտալիզացիան վերաբերյալ:
- Համահամեմատել նախորդ տարվա աուդիտի հաշվետվության ու նախկին ղեկավարության մեջ ներկայացված դիտարկումները եւ առաջարկները (ուշադրություն դարձնել առաջարկների հիմնավորումները):
- Համոզվել, որ վճարման ենթակա տոկոսների տարեկանի մնացորդը համապատասխանում է վճարման ենթակա տոկոսների տարեկանի մնացորդին՝ գումարած նշված ժամանակաշրջանում ծախսագրքում տոկոսները եւ հանած վճարված տոկոսները:
- Տոկոսային ծախսումները համահամեմատել հիմնավորող փաստաթղթերի հետ:
- Ըշտել՝ արդյո՞ք ոչ ձեզ հղիներ կազմակերպություններին վճարված տոկոսային եկամուտները հարկվում են արդյո՞ք կողմ:
- Ըշտել՝ արդյո՞ք անհատներին վճարված տոկոսային եւ ամուսները հարկվում են եկամտահարկով:
- Ստուգել՝ արդյո՞ք արտարժույթով ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսումները համահամեմատվում են կազմակերպության հաշվապահական ընթացակարգերի համաձայն:
- Ըշտել՝ արդյո՞ք նախորդ աուդիտի առաջարկներն իր պահանջվել են, թե ոչ:
- Թվարկել առաջարկվող աուդիտի բոլոր ճշգրտումները եւ դրանք քննարկել ղեկավարի հետ:

II Ֆինանսական ծախսերի (ծախսագրված եւ կապիտալացված տոկոսային ծախսումներ) վերլուծական ընթացակարգեր, վերահսկողական թեստավորում

- Հաշվապահությունից ստանալ տոկոսային պարտավորությունների ցանկը:
- Վերահսկել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվարկված տոկոսների ծախսագրման եւ դրանց կապիտալիզացիան վերաբերյալ:
- Վերահսկել նախորդ տարվա աուդիտի հաշվետվության ու նախկին ղեկավարության մեջ ներկայացված դիտարկումները եւ առաջարկները (ուշադրություն դարձնել առաջարկների հիմնավորումները):
- Համոզվել, որ վճարման ենթակա տոկոսների տարեկանի մնացորդը համապատասխանում է վճարման ենթակա տոկոսների տարեկանի մնացորդին՝ գումարած նշված ժամանակաշրջանում ծախսագրքում տոկոսները եւ հանած վճարված տոկոսները:
- Տոկոսային ծախսումները համահամեմատել հիմնավորող փաստաթղթերի հետ:
- Ըշտել՝ արդյո՞ք ոչ ձեզ հղիներ կազմակերպություններին վճարված տոկոսային եկամուտները հարկվում են արդյո՞ք կողմ:
- Ըշտել՝ արդյո՞ք անհատներին վճարված տոկոսային եւ ամուսները հարկվում են եկամտահարկով:
- Ստուգել՝ արդյո՞ք արտարժույթով ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսումները համահամեմատվում են կազմակերպության հաշվապահական ընթացակարգերի համաձայն:
- Ըշտել՝ արդյո՞ք նախորդ աուդիտի առաջարկներն իր պահանջվել են, թե ոչ:
- Թվարկել առաջարկվող աուդիտի բոլոր ճշգրտումները եւ դրանք քննարկել ղեկավարի հետ:

- ռիսկերի նվազեցման մեթոդների մշակում եւ հաշվառում,
- ներքին վերահսկողական գնահատում եւ իրականացվող միջոցառումների արդյունավետության գնահատում՝ համապատասխան հաշվետվությունների միջոցով:

Առաջին փուլում կատարվում է պարտավորությունների կազմի ու կառուցվածքի վերլուծություն: Այնուհետեւ իրականացվում է արտարժույթային ռիսկի մոնիտորինգ, ռիսկի քանակական արտահայտման մեթոդաբանության ընտրություն, հարմարեցում եւ փաստաթղթավորում: Կատարվում է հուսալիության գնահատում, այդ թվում՝ ռիսկի հնարավոր միջակայքի որոշում, հավաստիության որոշում:

Արտարժույթային ռիսկի գնահատման մեթոդի ընտրությունը պայմանավորված է ռիսկի գնահատման արդյունքների հավաստիությամբ (back testing), ընտրված մեթոդը տնտեսության ուսումնասիրվող ճյուղին հարմարեցնելու աստիճանով, արտարժույթային ռիսկի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաստիությամբ եւ ամբողջականությամբ:

Հաշվի առնելով հիշյալ նախապայմանները՝ առաջարկվում են արտարժույթային ռիսկի գնահատման value at risk մեթոդը: Եշված մեթոդների օգնությամբ քանակապես գնահատվում է կազմակերպությունում արտարժույթային ռիսկի ենթարկվածության աստիճանը եւ որոշվում, պապ նաեւ սահմանվում ռիսկի առավել

կազմակերպության սահմանը: Երկրորդ փուլում կատարվում են կոնկրետ քայլեր՝ ուղղված ֆինանսական ռիսկերի կրճատմանը:

Երրորդ փուլում սահմանվում են ներքին վերահսկողական ընթացակարգեր՝ ուղղված սահմանված նորմատիվներին հետեւելուն, պայմանագրով ածանցյալ գործիքների արդյունավետության գնահատմանը եւ ամփոփ արդյունքների ստացմանը:

Ելնելով ֆինանսական պարտավորությունների կառավարման անհրաժեշտությունից՝ գործնականում վերահսկողական ընթացակարգերը պետք է ներառեն հետեւյալ հիմնական փուլերը.

- Փոխառության պայմանագրերի ըստ ձեւի ստուգման ընթացակարգ:
- Փոխառության պայմանագրերի պայմանների ստուգման ընթացակարգ:
- Փոխառության ներգրավման նպատակահարմարության ստուգման ընթացակարգ:

Իհարկե, եթե կազմակերպությունն ունի ֆինանսական պարտավորությունների լայն փաթեթ, եւ դրանց շրջանառելիությունը բավական մեծ է, ապա դժվար է համատարած կտրվածքով նշված ընթացակարգերը կիրառել: Այդ իսկ պատճառով սահմանելով էականության որոշակի սահման՝ պետք է կատարվի վերահսկողության ընտրանք: Գործնականում վերահսկողության ընտրանքը կախված է կոնկրետ վերահսկողության ներդրման ծախսերից եւ դրանց կիրառումից ենթադրվող օգտակարությունից: Հաշվառումը պետք է կատարվի համահամեմատված փարթիկ դեպքում այդ ծախսերը կլինեն անհամեմատ քիչ, քանի որ սուտագրված տեղեկատվության հիման վրա ծրագիրը կավտոմատացնի նշված ընթացակարգերի մի մասը:

Ներքին վերահսկողական թեստերը պետք է պարունակեն անվավազ հետեւյալ ընթացակարգերը: Ընդ որում նպատակահարմար է այդ թեստերը բաժանել 2 մասի (տես՝ աղյուսակ 2):

Ֆինանսական պարտավորությունների ներքին վերահսկողության ծամանակային հայտնաբերվող տիպային սխալներից են.

- փոխառության պայմանագրերի բացակայությունը կամ դրանց կազմում սխալներով՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին անհամապատասխան,
- բանկի վարկի պայմանագրի բացակայությունը՝ վարկի ստացման ժամանակ,
- հաշվառման ոչ ճիշտ վարումը, գործառնությունների ոչ ճիշտ ձեւակերպումները, վերլուծական հաշվառման բացակայությունը եւ այլն, վարկերի եւ փոխառությունների ոչ նպատակային օգտագործումը,
- վարկերի եւ փոխառությունների միջոցով ձեռք բերված ակտիվների համար տրված կանխավճարների ոչ ճիշտ ձեւակերպումը,
- վարկերի եւ փոխառությունների տոկոսների վճարման հետ կապված ծախսերի ոչ ճիշտ հաշվառումը, ֆինանսական արդյունքին ոչ ճիշտ վերագրումը եւ ոչ ճիշտ հարկումը,
- վարկերի արտարժույթով ստանալու դեպքում փոխարժեքային տարբերությունների ոչ ճիշտ հաշվարկումը,
- երրորդ անձանց առջեւ պարտավորությունների ոչ ճիշտ հաշվառումը:

Այսպիսով՝ ռիսկերի կառավարման համակարգը՝ փոխառու միջոցների լիմիտավորման ֆինանսավորման արդյունքների դիվերսիֆիկացման, ռիսկերից ակնկալվող կորուստների դուրսգրման պահուստի ստեղծման եւ ածանցյալ գործիքների կիրառման գործառնություններով, անհնար է առանց ֆինանսական պարտավորությունների ռիսկերի ներքին վերահսկողական թեստավորման միջոցով իրականացվող ընթացակարգերի կիրառման: Ուստի՝ ֆինանսական պարտավորությունների ռիսկերի ներքին վերահսկողության վերջին փուլը թեստավորման միջոցով հայտնաբերվող սխալներն են եւ դրանց կանխման միջոցառումների կիրառումը:

1. Бухгалтерский анализ, Под ред. Голыцёва, Киев 2003, с. 286.
2. Mathematica in Education and Research, Vol. 7, #4, 1998.

Օգտագործված գրականություն

1. Լ.Հ. Գրիգորյան, Տնտեսական գործունեության ռիսկերի վերլուծություն, Երևան 2006
2. А.В. Сотникова, Внутренний контроль и аудит, М. 2001.
3. Price Water House Coopers, Раскрытие информации о рисках в отчётах МСФО 7, Москва 2006.
4. А.С. Шакин, Экономические и финансовые риски, М. 2006.
5. В.М. Гранатуров, Экономические риски, М. 2002.
6. Д.К. ван Хорн, Основы управления финансами, М. 2001.
7. Бухгалтерский анализ, Под ред. Голыцёва, Киев 2003.
8. Mathematica in Education and Research, Vol. 7, #4, 1998.